



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ

### Հ Ր Ա Մ Ա Ն

« 10 » մարտի 2015թ.

N 28

ք. Ստեփանակերտ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման բաժնում աշխատանքի բաժանում կատարելու մասին

Ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 28-րդ հոդվածով, ԼՂՀ դատախազության Կանոնակարգի 9-րդ, 19-րդ, 22-րդ, 24-րդ կետերի համաձայն

### Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ԼՂՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման բաժնում /այսուհետ բաժին/, ըստ զբաղեցրած պաշտոնների, կատարել աշխատանքի հետևյալ բաժանումը.

1) Բաժնի պետ Լ.Վ.Բարսեղյանին՝

1.1 Կազմակերպել և իրականացնել բաժնի աշխատանքների ընդհանուր ղեկավարումը:

1.2 Վերահսկել բաժնի աշխատակիցների վրա դրված պարտականությունների կատարումը:

1.3 Ապահովել մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ ԼՂՀ գլխավոր դատախազի հրամանների, ցուցումների և կարգադրությունների, ոլորտը համակարգող տեղակալի ցուցումների կատարումը:

1.4 Առաջարկություններ ներկայացնել ոլորտը համակարգող ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալին՝ բաժնի աշխատակիցներին խրախուսելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

1.5 Մասնակցել ԼՂՀ գլխավոր դատախազության աշխատանքային ծրագրի նախապատրաստման աշխատանքներին:

1.6 Կազմակերպել բաժնի վիճակագրական հաշվետվության կազմման աշխատանքները:

1.7 Հրավիրել օպերատիվ խորհրդակցություններ:

1.8 Կատարել ԼՂՀ գլխավոր դատախազի և ոլորտը համակարգող տեղակալի այլ հանձնարարությունները:

1.9 Դատարանում պաշտպանել մեղադրանքը, մասնակցել վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական նիստերին:

Բաժնի պետը բաժնի գործունեության համար պատասխանատվություն է կրում ԼՂՀ գլխավոր դատախազի և ոլորտը համակարգող տեղակալի առջև:

#### 2) Բաժնի ավագ դատախազ Վ.Վ.Սիրգոյանին՝

2.1 Իրականացնել մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման գծով աշխատանքները:

2.2 Վերահսկել ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի, Շուշիի և Ասկերանի շրջանների դատախազությունների կողմից մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման գծով իրականացված աշխատանքները:

2.3 Դատարանում պաշտպանել մեղադրանքը, մասնակցել վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական նիստերին:

#### 3) Բաժնի դատախազ Է.Ա.Արզումանյանին՝

3.1 Իրականացնել մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման գծով աշխատանքները:

3.2 Վերահսկել ԼՂՀ Շահումյանի, Մարտակերտի և Հաղրուքի շրջանների դատախազությունների կողմից մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման գծով իրականացված աշխատանքները:

3.3 Դատարանում պաշտպանել մեղադրանքը, մասնակցել վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական նիստերին:

#### 4) Բաժնի դատախազ Ա.Ս.Խաչատուրյանին՝

4.1 Իրականացնել մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման գծով աշխատանքները:

4.2 Վերահսկել ԼՂՀ Մարտունու և Քաշաթաղի շրջանների դատախազությունների կողմից մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման գծով իրականացված աշխատանքները:

4.3 Դատարանում պաշտպանել մեղադրանքը, մասնակցել վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական նիստերին:

2. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին և ԼՂՀ քաղշրջդատախազներին:

3. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Արդարադատության երրորդ դասի**

պետական խորհրդական

Ա.Ա.Մուսիյան